ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/171

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.07.2021թ. թիվ 26/26-1/10908-2021 գրությամբ Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 02.07.2021թ. թիվ ՀԲ//16748-2021 գրության հիման վրա, 06.07.2021թ. թիվ 26/26-1/10908-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/171 ընթացակարգի շրջանակներում 12.07.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.07.2021թ. թիվ ՀԲ//16748-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-2021/6Ծ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ: 2021 թվականի մայիսի 26-ին ժամը 12:00-ին կայացած հետադարձ աճուրդի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն: 2021 թվականի հունիսի 11-ին պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ծանուցվել է ընտրված մասնակցին:

Սակայն, պայմանագրի ստորագրված տարբերակը «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) ենթակետը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/171 ընթացակարգի շրջանակներում 12.07.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/171 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/171 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարվել է «ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-2021/6Ծ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 26.05.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.06.2021թ. nshakhnazaryan0@gmail.com էլ. փոստի միջոցով Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.07.2021թ. թիվ ՀԲ//16748-2021 գրությամբ հայտնել է, որ պայմանագրի ստորագրված տարբերակը Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանի կողմից ներկայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.07.2021թ. թիվ 26/26-1/10908-2021 գրությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարության 02.07.2021թ. թիվ ՀԲ//16748-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարվել է «ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-2021/6Ծ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 26.05.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.06.2021թ. nshakhnazaryan0@gmail.com էլ. փոստի միջոցով Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.07.2021թ. թիվ ՀԲ//16748-2021 գրությամբ հայտնել է, որ պայմանագրի ստորագրված տարբերակը Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանի կողմից ներկայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ:

Պատվիրատուն, վերը նշված գրությամբ ներկայացրել է Ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերը, այդ թվում՝ Ընկերության կողմից կնքված պայմանագրի և այն ծրարի պատճենը, որով ուղարկվել է կնքված պայմանագիրը՝ կից փաստաթղթերով:

Նշված ծրարի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ N RR299213741AM առաքանին (ուղարկող Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյան, ստացող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի Երևանի 58 բաժանմունք է հանձնվել 24.06.2021թ.:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին պայմանագրի նախագիծը՝ 11.06.2021թ. ներկայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի

31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 14.06.2021թ. և լրացել 25.06.2021թ. ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին հանձնվել են սահմանված ժամկետի պահպանմամբ, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 06.07.2021թ. թիվ 26/26-1/10908-2021 գրությամբ Ա/Ձ Նորայր Միքայելի Շախնազարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**